

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


9145



1929

ԱՐՀԱՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ  
ԵՐԶԱՆՈՒՄ

(ՀԱՄ. ԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ  
ԴԻՄՈՒՄԸ)



ԱՐ 2001  
Առ 1929 թ.

2010

19548-ԱՀ

ՀՅՈՒՅՆԱԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՏՎԵՐ № 247  
ԳՐԱՄՔԱՆԱԿԱՐ 2797 (բ)  
ՏԻՐԱԺ 5000



3917-53

ԱՐՅՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏք Ե  
ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐԵՆ ԻՐԵՆՑ ՇԱՐ-  
ՔԵՐԸ, ԱՆՑՆԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՆՈՐ ԶԵՎԵՐԻ ՈՒ ՄԵԹՈՂՆԵՐԻ  
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԴԱՍՎԱՐԴԱՅԻՆ  
ԾԱԿԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴԴԵՄ ՏԱՏԱՆ-  
ՎՈՂՆԵՐԻ. ԸՆԴԴԵՄ ՑԵԽԱՅԻՆ  
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՄԿԻ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ  
ԲՈԼՈՐ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ԱՐՅՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ  
ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆՆԵՐԻՆ  
Արհմիությունների համամիութենա-  
կան խորհուրդը գիմում և ԽՍՀՄ բոլոր  
բանվորներին ու ծառայողներին և պահան-

չում և դրանցից յուրաքանչյուրից ուշադիր  
ու լուրջ վերաբերմունք գեղի այն կարե-  
վորագույն խնդիրները, վոր առաջադրում  
և ՀԱՄԿԽ-ը իր ներկա նամակով:

Ընկերներ.

Արհմիությունները մեծագույն պատ-  
մական դեր են խաղացել Ռուսաստանի  
բանվոր դասակարգի հեղափոխական պալ-  
քարում, հոկտեմբերյան մարտերում և պրո-  
լետարիատի դիկտատուրայի հաստատման  
գործում: Առանց արհմիությունների անձ-  
նվեր, հերոսական աշխատանքի, պրոլե-  
տարիատի դիկտատուրան չեր հաղթանա-  
կի: Քաղաքացիական պատերազմի ծանր  
տարիներին արհմիությունները բայց կեր-  
յան կուսակցության բերդն ելին, Խորհըր-  
դային պետության բերդը, վոր համախըմ-  
բում ելին պրոլետարների միլիոնավոր զանգ-  
գածները: Քաղաքացիական պատերազմի

4

ճակատներից պալքարը տեղափոխվեց տըն-  
տեսական ճակատ: Պրոլետարիատը ջախ-  
ջախեց կապիտալիզմը բաց պալքարում,  
բաց կապիտալիզմի արմատները դեռ այժմ  
ել ուժեղ են: Պրոլետարիատը պետք է  
վերջնականապես արմատախիլ անի կա-  
պիտալիզմի այդ մնացորդները, պրոլետա-  
րիատը սկսոք և ավարտի հասցնի իր պալ-  
քարը՝ վոչ միայն հին կապիտալիստական  
կարգերը կործանելով, այլև նոր կարգեր,  
սոցիալիստական կարգեր ստեղծելով: Դա  
սոցիալիստական հեղափոխության ամենա-  
դժվարին խնդիրն է, մանավանդ մեր յերկ-  
րում, — հետամնաց աեխնիկայի և ցածր  
աստիճանի վրա գտնվող կուլտուրալի յերկ-  
րում, մի յերկրում, վորը հարյուրավոր տա-  
րիներ ցարիզմի կրունկի տակ և գտնվել:  
Հեղափոխությունը բարձրացրեց մեր աշ-  
խատավոր ժողովուրդը նոր, բարձր աստի-

5

ձանիւ Բայց յեթե հեղափոխության նվաճումները չամրապնդենք եկոնոմիկայում, յեթե մեր հետամնաց յերկիրը չվերակառուցենք ինդուստրիալ, կուլտուրական յերկրի, մենք անկարող կլինենք պահպանել Հոկտեմբերի հաղթանակների արդյունք նվաճումները և այն ժամանակ դարձը զեպի կապիտալիզմն անխուսափելի կլինի

Ահա թե ի՞նչու բայց կիների պըուծարական կուսակցությունը բանվոր դասակարգի առջե դրել և յերկրի սոցիալիստական վերակառուցման, նոր գործարանների, նոր ֆաբրիկաների և ելեկտրոկայնների կառուցման, հետամնաց, արորով աշխատող գյուղատնտեսության արմատական վերակառուցման վիթխարի խնդիրները: Հենց այս և, վոր կա ժողովրդական տնտեսության սոցիալիստական ոեկոնոմուկցիան (վերակառուցումը), հենց այս

և այն շրջանը, վոր մենք անվանում ենք ԽՍՀՄ ոեկոնոմությունիվ շրջան:

Այս շրջանի դժվարությունները շատ մեծ են: Ինչպես քաղաքացիական պատերազմի շրջանը, սա ևս պահանջում է պրոլետարիատի և նրա հետեից գնացող ամենալայն չքավորական ու միջակալին մասսաների բոլոր ֆիզիկական և ստեղծագործական ուժերի մեծագույն լարում:

Դասակարգային թշնամին նեպմանը, կուլակը և վնասարարը պետապարատումուղում են ոգտագործել ոեկոնոմությունիվ շրջանի դժվարությունները, վորպեսզի կազմալուծի մեր շարքերը:

Բայց այդ դասակարգային թշնամին պարատություններ և կրում, ինչպես կրել և նա հեղափոխության բոլոր տարիներում: Այդ պարտությունը միայն այն չե, վոր պրոլետարական դիկտատորան իր ակտիվ

թշնամիներին բանտ և նստեցնում, վոր նագնդակահարում և մեր սոցիալիստական արդյունաբերության վնասարարներին, այդ գլխավոր պարառությունն նրանումն է, վոր մեծ պրոլետարական լերկիրը տարի տարու վրա, որ որի վրա ամրապնդվում է, աճում և առաջ շարժվում ստեղծարար սոցիալիստական շինարարության գործում։ Արդեն այժմ ել բանվոր դասակարգը՝ սոցիալիզմի կառուցման իր աշխատանքում հասել և չտեսնված թափի, տեմպի։ Հնդամյակի առաջին իսկ տարին ցուց տվեց, վոր մենք պլաններով ուրվագծածից արագ ենք առաջ գնում։ Խորհրդային պետությունը հասել և ահազին աջողությունների անտեսական, սոցիալիստական շինարարության մեջ, այդ աջողությունները հնարավոր են միայն շնորհիվ միլիոնավոր բանվորների, չքավոր-միջակային գյուղացիական

մասսաների աջակցության, շնորհիվ սոցիալիզմի շինարարության գործում նրանց հանդես բերած ակտիվության ահազին աճման։ Պրոլետարիատի առաջավոր մասսաների անսահման նվիրվածությունը հնարավորություն և տալիս վոչ միայն հաջող կովելու ակնհայտ դասակարգավիճ թշնամութեմ, այլ և հաջողությամբ հաղթահարելու բանվորների մեջ, արհմիությունների ներսում և այլ բանվորական կազմակերպություններում գոյություն ունեցող հետամընաց, մանր-բուրժուական տրամադրությունները։ Համկոմկուսը, վորպես պրոլետարիատի կուսակցություն և նրա զեկավարությամբ բնիթացող արհմիություններն աջողությամբ հաղթահարել են և հաղթահարում են ամեն տեսակ հարձակումները, ինչպես արոցկիստական հարձակումները, նույնպես և աջերի այժմյան հարձակում-

ները լենինյան կուսակցության միակ ճիշտ  
գլխավոր գծի դեմ, ինդուստրացման և գյու-  
ղատնտեսության սոցիալիստական վերա-  
կառուցման այժմյան տեմպի դեմ։ Բայց  
պրոլետարիատի վրա տարածվող մանր-  
բուրժուական ազգեցությանը բանաձեռում  
և վարչումներում հականարված հասցնելը  
քիչ ե. անհրաժեշտ ե, վոր այդ հականար-  
վածը տրվի ամենորյա կյանքում, ամենորյա  
աշխատանքում լուրաքանչյուր գործարա-  
նում, ամեն մի ֆարբիկայում, շախուսում, ցե-  
խում, մասնավանդ պետական, տհանսական  
և արհմիութենական ապարատում։ Մինչ-  
դեռ մեզանում կան դեռևս շատ բանվոր-  
ներ ու շատ ծառայողներ, վորոնք փակ-  
վում են իրենց քաղքենիական խիսունջի  
մեջ վորոնք չեն տեսնում և չեն զգում սո-  
ցիալիստական շենքի մեծագույն շինարա-  
րության վողջ վիթխարությունը, թափ:

ՀԱՅԿԻ բացորոշ հայտարարում ե, վոր  
վոչ միայն արհմիությունների շարքային  
անդամների մեջ, այլև անգամ ակտիվիտե-  
ների մեջ արհմարմիններում կան այնպիսի  
քաղքենական, նեղ ցեխային, տրեգյունիս-  
տական, մանր-բուրժուական տրամա-  
դրություններ—նոր եպոխայի չհասկանալը,  
նոր խնդիրների չըմբռնելը, տեմպի դան-  
դադություն արհմիությունների աշխատան-  
քում, բյուրոկրատիզմ, կտրվածություն  
մասսաներից, փշրանքախնդրություն, ան-  
կարողություն կապակցելու բանվորների  
ամենորյա շահերի և պահանջների պաշտ-  
պանությունը պրոլետարիատի հիմնական  
խնդրի հետ—սոցիալիստական արդյունա-  
բերության բարձրացման խնդրի, մեր վողջ  
տնտեսության հետագա սոցիալիստական  
վերակառուցման խնդրի հետ։

Կապիտալիստական յերկրներում հե-

զափոխական արհմիությունների դասակարգալին պարտականությունն և հանդիսանում հակադրել բանվոր դասակարգի շահները կապիտալիստական արդյունարերության շահներին և կապիտալիստական ռացիոնալացում կիրառելուն, վորն ամենասերտ կերպով կապված ե բանվոր դասակարգն ավելի ստրկացնելու և նրա դրությունը վատացնելու հետ: Յեվոպալի և Ամերիկայի հեղափոխական բանվորները նըպատակ են դնում խորտակել բուրժուական պետական մեքենան, վորն որդանապես սերաաճում ե ձեռնարկատիրական կաղմակերպություններին:

ԽՍՀՄ մեջ պըոլիտարիատի դասակարգալին պաէքարը մի պաէքար ե, վոր մզգում ե Խորհրդալին Պետության ամրացման ու բարելավման համար, սոցիալիստական արդյունարերության հետագա ծա-

վալման համար, սոցիալիստական ռացիոնալացումն ամուր ձեռքով կիրառելու համար, հաղթահարելու համար թշնամի դասակարգերին և նրանց մնացորդներին, վորոնք քաշում են մեզ դեպի հետ դեպի կապիտալիզմ: Մեզանում բանվոր դասակարգի դրության բարելավումն անխզելիորեն կապված ե սոցիալիստական արդյունարերության ամրացման, գյուղանոնահսության սոցիալիստական վերակառուցումն աջողությամբ կիրառելու, քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի դեմ աջող հարձակում ծավալելու գործի հետ: Մանավանդ այն բանվորը, այն արհմիութենականը, վորը չի հասկանում, վոր բանվոր դասակարգի դրության բարելավումը խորհրդալին յերկրում կարող ե կատարել միայն տընտեսության բարձրացման հիման վրա,—կապիտալիզմի մնացորդներն աջողությամբ ար-

մատախիլ անելու և կուլակի ու նեղմանի դեմ  
աջողությամբ պայքարելու հիման վրա, — նա  
աշկարա սահում, բռնում և բանվոր դասա-  
կարգի շահերը սոցիալիստական արդյունա-  
բերության, Խորհրդավոր Պետության շա-  
հերին հակադրելու մենշևիկյան-տրոցկիս-  
տական ուղին: Միայն մենշևիկները կարող  
են բաժանել իրարից բանվոր դասակարգի  
շահերի պաշտպանությունը մեր յերկրում  
սոցիալիստական ռացիոնալացում՝ կիրառե-  
լու խնդիրներից, աշխատանքի արտադրո-  
ղականության բարձրացումից, արդյունա-  
բերության արտադրանքի վորակը բարձ-  
րացնելուց ու ինքնարժեքն իջեցնելուց և  
այլն:

Արհմիութենական կազմակերպություն-  
ների աշխատանքի մեթոդների բոլոր ձեերի  
վերակառուցումը համաձայն ռեկոնստրուկ-  
տիվ շրջանի խնդիրների, համաձայն մեր

աչքերի առջև քաղաքում և գյուղում ծա-  
կալվող սոցիալիզմի շինարարության վիթ-  
խարի խնդիրների—կայանում ե, ամենից  
առաջ նրանում, վոր արհմիությունները և  
նրանց բոլոր մարմինները վերից վար  
կանգնեցնենք՝ յերեսները դարձրած դեպի  
արտագրություն, մոտիկ՝ սոցիալիստական  
անտեսությանը և գրանով զորեղ մղում  
տանք բանվորական մասսաների ավելի  
լայն գիտակցական և սերտ մասնակցու-  
թյանը սոցիալիզմի շինարարության գոր-  
ծին: Անհրաժեշտ ե միլիոնանոց բանվորա-  
կան մասսաների ստեղծագործ ակտիվու-  
թյունն ամենից առաջ ուղղել դեպի ար-  
տագրություն, անհրաժեշտ ե, վոր մաս-  
սաների ստեղծագործ խանդավառությունը  
համակողմանի գործադրություն գտնի մեր  
յերկրի անտեսական զորության բարձրաց-  
ման աշխատանքի մեջ: Մեր բովանդակ

յերկրում զորեղ ալիքով ծավալված սոցիալիստական մրցությունն աշխատանքի կազմակերպման նոր, սոցիալիստական ձեռն ե, փոր պետք ե դառնա մասսաներին արտադրության հարցերի շուրջը կազմակերպելու աշխատանքի հիմնական ողակը, պետք ե դառնա մասսաները, մանավանդ պրոլետարիատի շարքերը լցուղ բանվորների նոր կազմերի սոցիալիստական դաստիարակության հիմնական մեթոդը։ Սոցիալիստական մրցությունն սկսվել և առանց արհմիությունների անմիջական մասնակցության, գայց առավել հաստատակամությամբ արհմիությունները պետք և այժմ աշխատեն իրենց ձեռքն առնելու այդ զորեղ շարժումը, վորպեսզի ել ավելի ծավալեն այն, ավելի լավ կազմակերպեն, ավելի մեծ չափերով սպառագործեն այն իրեն միջոց՝ բարձրացնելու ԽՍՀՄ ժողովրդական տնտեսու-

թյունը, վորպեսզի մեծագույն չափով նըպաստեն իրագործելու կապիտալիստական յերկրներին հասնելու և նրանցից առաջանցնելու խնդիրը։

Առաջիկա տարվա համար ուրվագծած ստուգիչ թվերի իրագործման մեծագույն պատասխանատվությունը պահանջելով պահանջում ե ներգրավել սոցիալիստական մրցության ասպարեզ բանվորների նորանոր շերտեր և նսխի և առաջ պահանջում ե ստուգել նախորդ շրջանում կատարված սոցիալիստական մրցության ընթացքը և առանձին ձեռնարկությունների, ցեխերի ու առանձին բրիգադների միջև կնքված պայմանագրերի կատարումը, նպատակ ունենալով պարզել այդ մրցության իրական ոգուտները, փոր ստանում և բանվորական պետության անտեսությունը։

Նույնպես մնարաժեշտ և այժմ հա-

տուկ ուշադրություն նվիրել անընդհատ արտադրության անցնելու խնդրին, —մի հանգամանք, վորը հսկայական դեր է խաղալու յերկրի ինդուստրացումն արագացնելու, հնգամյա պլանն իրագործելու, բանվորական զանգվածների տնտեսական և կուլտուրական դրությունը բարելավելու գործում:

Անընդհատ արտադրության անցնելու հետ կապված դժվարությունները պահանջում են արհմիություններից նշանակելի չափով լավացնել կազը մասսաների և արտադրության կազմակերպման գործի հետ։ Գործնականապես անհրաժեշտ է, վոր արհմիությունների աշխատավորները, սկսած բարձրերից և վերջացրած ստորին ողակներով, զաղարեն զբաղվել ընդհանուր բրնութիւ ֆրազներով մասսաների ակտիվության մասին և ընդհանուր մոտենան արտա-

գրության գործին, ուսումնասիրեն յուրաքանչյուր ձեռնարկության բոլոր կոնկրետ առանձնահատկությունները, սոցմքցության կոնկրետ ձևերը, կազմակերպեն սոցմքության պայմանագրերի կնքման ղեկավարություն, որը՝որին տեղեկանան, իմանան այդ պայմանագրերի կատարման ընթացքը, ուրվագծեն պայմանագրերի կատարման յերեվան իեկած թերությունների վերացման ճանապարհները, ներգրավելով և հետաքըրքերով այդ աշխատանքի ամբողջ ընթացքով ու պրոցեսով տվյալ ձեռնարկության ամեն մի բանվորի։ Հաճախ մասսաների ստեղծագործ, յեռանգագին նախաձեռնությունն անոգուտ և անցնում միայն այն պատճառով, վոր նա բավականաչափ կազմակերպված չե, վոր նա չի ուղղվում գեղի կոնկրետ գործ, վոր հիմնական հարցերը գրվում են բանվորի առջև խիստ ընդ-

հանուր բնույթով. որինակ՝ ձեռնարկությունների և տրեստների վարիչների զեկուցումները տրվում են ձեականապես, միայն թե դրանով գլուխ ազատեն և բանաձեվերը նույնպես հանվում են՝ «առհասարակ», «ընդհանուր առմամբ»:

Այս ձանապարհով բանվորներին չի կարելի շահագրգուել արտադրության բարձրացման գործով: Մենք պետք են ջանք թափենք համնելու այնպիսի դրության, վորպեսզի լուրաքանչյուր բանվոր զգա գործարանի զարկերակի տրոփյունը, նրա ամենորյա պաէքարը լավագույն վորակի, մեքենաների կատարելագործման, գործարանի լավագույն սարքավորման, ինքնարժեքի իջեցման և այլնի համար: Հարկավոր են, վորապետքարը համապատասխան արտադրական խանդակառություն առաջ բերի լուրաքանչյուր բանվորի մեջ: Այն ժամա-

նակ, ինչպես ասսւմ են բանվորներից վոմանք, սիրով կգնան արտադրական խորհրդակցություններ, կարտահայտվեն դիրեկտորների զեկուցման առթիվ և առաջարկներ կանեն:

Արտադրական խորհրդակցություններ և ձեռնարկությունների վերահսկիչ հանձնաժողովները միավորումների լավագույն ձևն—ի հայտ բերելու բանվորների արտադրական ակտիվությունը, նրանցից ցուցումներ, դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար: Բայց հարց են ծագում, թե վորտեղից են այն փաստերը, վոր տանյակ և հարցուրավոր արաադրական խորհրդակցություններ թուլանում են, վոր բանվորները դադարում են արտադրական խորհրդակցությունների նիստեր գնալ: Դրանց պատճառն այն է, վոր այդ խորհրդակցությունների հարցուրավոր և հա-

դարավոր արժեքավոր առաջարկություններ չեն կենսագործվում։ Իսկ այդ ել իր հերթին աեղի իւ ունենում այն պատճառով վոր մեր գործնական աշխատանքում շատ բյուրոկրատիզմ կա, շատ բյուրոկրատական աղավաղումներ կան ինչպես տնտեսական մարմիններում, այնպես ել արհեստական կաղմակերպություններում։

Ահա թե ինչու արտադրությանն ակտիվ ոգնություն ցուց տալուն և կառավարման միանձնյա հարգն ամրապնդելուն զուգընթաց՝ հարկավոր ե վճռական կոիվ ընդգեմ տնտեսական ապարատների բյուրոկրատական և գոռող վերաբերմունքի դեպի բանվորների առաջարկները, դեպի բազմամիլիոն մասսաների նախաձեռնությունը։ ահա թե ինչու հարկավոր ե վճռական պայքար ընդգեմ պրոֆմիությունների բյուրոկրատական կտրվածության՝ մասսաներից։

Միևնույն ժամանակ մեր ձեռնարկություններում արձանագրված են մի շաբք դեպքեր, յերբ մի շաբք բանվորներ ու ծառայողներ անբարեխիզմ են վերաբերվել դեպի աշխատանքը։ Այդպիսի բանվորը, յերբ խոսք ե լինում աշխատավարձի 10-20 կոպեկի մասին, ամենից շատ ե աղմկում, իսկ յերբ խոսք ե լինում արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, արտադրանքի վորակի լավացման, արտադրության ոացիոնալացման և գործարանի գործի զարգացման մասին, գլուխում ե, վոր այդ իրեն չի վերաբերում։

ՀԱՅԿԻ ուղղակի հայտարարում ե, վոր այդպիսի բանվորը, ինչպես և բյուրոկրատների կարգին պատկանող տնտեսավարն ու արհմիութենականը, վորոնք արհամարհում են մասսաներին, հանդիսանում ե գիտակցող կամ չգիտակցող ներքին թշնամի պրոլետարիատի շաբքերում։

Ժամանակ և վերջ տալու դրան։ Յեթե  
մենք ամենավճռական պայքար չծավալենք  
քայլայվող տարբերի գեմ խորհրդավին,  
տնտեսական և արհեստակցական ապա-  
րատներում ինչպես նաև բուն բանվորների  
շրջանում, մենք չենք կարող վերջնակա-  
նապես ջախջախել գասակարգային թշնա-  
մուն, մենք սոցիալիզմ չենք կառուցի մեր  
յերկրում։

Այս գործում արհմիությունները, վո-  
րոնք միավորում են իրենց շարքերում 10  
միլ. պրոլետարներ, պետք և կատարեն զե-  
կավար գեր։ Անհրաժեշտ ե, վոր բանվո-  
րական զանգվածներն առաջ քաշեն հազա-  
րավոր, տասնյակ հազարավոր իրենց լա-  
վագույն ներկայացուցիչներին պետական,  
տնտեսական և արհմիութենական ապա-  
րատների համար։ Անհրաժեշտ ե, վոր իր-  
ենք՝ բանվորական մասսաները և զեկա-

վար պլոտֆմարմինները ձեռք զարկեն պլոտ-  
ապարատի բարելավման գործին, արհ-  
միութենական ապարատի համար թարմ  
բանվորների և բանվորուհիների նոր հա-  
զարավորներ առաջ քաշելու գործին։ Հար-  
կավոր է, վոր արհմիություններն ամենոր-  
յա, սիստեմատիկ հսկողություն սահմանեն  
տնտեսական մարմինների վրա, հենվելով  
զեկավար խորհրդավին կազմակերպություն-  
ների ոգնությանը և կոմկուսակցության  
զեկավարությամբ վճռարար, հեղափոխա-  
կանորեն, պրոլետարորեն առաջ շարժեն  
տնտեսական ապարատներում գոյություն  
ունեցող բյուրոկրատական ազավաղումների  
արմատախիլ անելու գործը։

Արհմիությունները, ուժեղացնելով մաս-  
սաների սոցիալիստական գաստիարակու-  
թյան աշխատանքը հանուն դիսցիպլինայի և  
հանուն աշխատանքի արտադրողականու-

թիան բարձրացման, միաժամանակ պետք  
է լավացնեն բանվորների ամենուրա կեն-  
ցաղային և նյութական պահանջների պաշտ  
պահությունը:

Բանվորների մթերավորման, հերթերի  
գեմ պայքարելու հարցերը, բնակարանային  
շինարարության, աշխատանքի պաշտպա-  
նության, աշխատանքի շուկայի կարգա-  
վորման, գործազրկության գեմ պայքարե-  
լու հարցերն այն հիմնական հարցերն են,  
վորոնց շուրջը, ինչպես և արտադրության  
շուրջը, պետք է կենտրոնացնեն ներկա-  
յումս արհմիությունները լայն բանվորա-  
կան զանգվածների ակտիվ ուշադրու-  
թյունը:

Սոցիալիզմի հաջող շինարարությունն  
անխզելիորեն կապված է կուլտուրական  
հեղափոխության հետ, բանվորական մաս-  
սաների կուլտուրական մտկարդակի և ին-

տերնացիոնալ դաստիարակության ու ա-  
մենից առաջ արհշարժման աշխատավորնե-  
րի կազմերի կուլտուրական և քաղաքական  
մակարդակի բարձրացման հետ: Անհրաժեշտ  
է աշխատանքն արհմիություններից փո-  
խազրել ստորին միավորները՝ ցեխերն ու  
գործարանները, ավելի քիչ ժամանակ անց  
կացնելով նիստերի ժխորում՝ վերապա-  
ազարատներում և ավելի շատ ուշադրու-  
թյուն դարձնելով աշխատանքի ստորին ու  
դակներին: Հարկավոր եաշխատանքի այն-  
պիսի գրվածք տալ վորպեսպի լուրաքան-  
չուրը ճանաչի իր արհմիությունական ներ-  
կացացուցչին, իսկ լուրաքանչուրը արհմի-  
ութենական ներկայացուցիչ ճանաչի բան-  
վորին, իմանա նրա պահանջները, նրա կա-  
րիքները և այն, թե ի՞նչից և նա գան-  
գատվում ու աշխատի նրա հայտարարու-  
թյունները քննության առնել, աշխատի,

վոր բավարարեն նրան, իսկ յեթե անկառելի է բավարարել, ապա ընկերաբար բացատրի բանվորներին այդ անկարելիությունը:

Միայն ուժեղացնելով արհմիությունների կապը միլիոնավոր մասսաների հետ, միայն նոր հարցուրավոր ու հազարավոր դեկավաքներ ու կազմակերպիչներ առաջ քաշելով բանվորներից, միայն արմատախիլ անելով այն բոլոր ոռոտինացինը, փուածը և քայլավածը, վոր կա արհմիութենական ապարատում, միայն ամենալայն արհմիութենական բանվորական գենոկրատիալի իրագործմամբ ու բոլոր թերությունների պրոլետարական ինքնաքննազատթյան ամենալայն ծավալմամբ արհմիությունները կհասնեն այն բանին, վոր նըրանք կդառնան կոմունիզմի իսկական դրաբոց ներկա շրջանի պայմաններում և կկա-

րողանան մորիլիուցիալի լենֆարկել միլիոնավոր պրոլետարական զանգվածների ակտիվությունն ու աջակցությունը դասակարգացին թշնամու դեմ կռվելու, կապիտալիզմի մնացորդներն արմատախիլ անելու, հաղթական սոցիալիստական շինարարություն կատարելու համար:

Հանուն կոմունիստական կուսակցության գլխավոր գծի: Հանուն յերկրի ինդուստրացման: Հանուն սոցիալիստական շինարարության հնգամյա պլանի իրագործման ապահովման ու արագացման: Հանուն արհմիությունների ուշագրությունը զեղի արտադրություն գարձնելու: Հանուն նոր միլիոնավոր մասսաների ներգրավման սոցիալիստական շինարարության մեջ: Հանուն ամբողջ բանվոր դասակարգի ներգրավման սոցիալիստական մրցության աս-

պարեգ: Հանոււն աշխատանքային կարգապահության: Հանոււն արտադրականության բարձրացման: Հանոււն արհմիությունների աշխատանքի մեթոդների ու ձևերի վճռական վերակառուցման:

Հառաջ ղեպի կոմունիզմի: Հաղթանակ:

ՀԱՄԿԽ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

\*\*\*\*\*



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0042883

1930/129

